ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ՏՈՀՄԻ ԾԱԳՄԱՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բագրատունիները Հայկական լեռնաշխարհի անդրածին տոհմերից մեկն էին: Ավանդույթի համաձայն, նրանց նախնի Բագարատի անունն աղերսակցվում է Անգեղ աստծու անվան հետ: Բագարատի սերունդների ժառանգած Անգեղ տուն գավառը, համաձայն Անանուն մատենագրի հաղորդման, «կոչեցաւ Բագարատ և Անգեղ, զոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբարոսացն աստուած կոչեցի»: Ըստ Անանունի՝ Բագարատը սերում է հայոց անվանադիր նախնի Հայկ նահապետից[1], իմա՛ ունի բնիկ ազգային արմատներ:

Հայտնի է, որ Բագարատ անունը ծագում է հնդեվրոպական Bagadata *(«աստվածատուր», «դից տուրք») բառեզրից, որի* Bag *արմատից են ծագել նաև բագին (մեհյան), Բագավան («աստծու ավան», «աստծու տեղ»), Բագարան («աստծու տեղ») և համաբնույթ այլ բառեր: Բագարատ անձնանվան մեջ* Bag *արմատի առկայությունը, անշուշտ, վկայություն է նաև Բագրատունի տոհմանունի հնդեվրոպական ծագման մասին, ինչը բացառում է այդ տան սեմական (հրեական) ծագման վերաբերյալ առասպելը, որը տեղ է գտել Մովսես Խորենացու մոտ: Պատմահորը թեև ծանոթ է Հայկ նախահորից Բագրատունիների սերելու մասին ավանդազրույցը, բայց այդ տոհմին աստվածաշնչական ծագում վերագրելու մղումով նա հորդորում է չհավատալ ավանդությանը, գրելով, որ Բագրատունիների նախնին ոչ թե Բագարատն է, այլ հրեա Շամբատը: Վերջինիս հայոց Հրաչյա թագավորը բնակեցնում է Հայաստանում: Շամբատից «ասէ պատմագիրն լինել զազգն Բագրատունեաց, և հաւաստի է»[2],– գրում է Խորենացին: Ընդ որում նա Բագարատ անունն առաջին անգամ հիշատակում է միայն հայոց թագավոր Վաղարշակ Պարթևի (Տրդատ I-ի) օրոք, բնավ չանդրադառնալով այդ անվան դիցական ծագմանը: Վաղարշակ Պարթևը, գրում է պատմագիրը, իր ձեռնարկած բարեկարգությունների ժամանակ բարիքների փոխարեն, որ իր հանդեպ ցուցաբերել էր «առն զօրաւորի իմաստնոյ, որ ի հրէիցն՝ Շամբատայ Բագարատ. տալով նմա իշխանութիւն ազգաւ թագադիր լինել Արշակունեաց. և որ ի նմանէ ծնեալ ազգ՝ լինել կոչմամբ յանուն նորա Բագրատունի…»[3]:*

Ինչպես տեսնում ենք, պատմագիրը Շամբատին համարում է Բագրատունիների նախնի՝ հենվելով այն պատումի վրա, որը տեղ է գտել Մարաբաս Մծուրնա-

---

[1] *Պատմութիւն Սեբէոսի (այսուհետև՝ Ս ե բ է ո ս), աշխ. Գ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 51:*

[2] *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Մ ո վ ս է ս Խ ո ր է ն ա ց ի), աշխ. Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, I, ԻԲ, էջ* 68-69*:*

[3] *Նույն տեղում, էջ 104–105:*

ցու (Կատինայի) մատյանում, շարադրված «ոչ վաղ, քան մ. թ. IV դարը»[4]: Բագրատունիների հրեից ծագմանը Խորենացին անդրադարձել է նաև այլ առիթներով[5]: Մինչդեռ Անանունը Բագրատունիների ծագումն առնչակցում է հայոց աստվածությունների՝ Հայկի և Անգեղի հետ, անշուշտ, դարձյալ ելնելով այդ տոհմում պահպանվող ավանդություններից, որոնք ավելի հավաստի են, քան Մարաբասի մատյանում տեղ գտածը: Պաշտամունքի ոլորտը ժողովրդական հիշողության մեջ ավելի կենսունակ էր, և, անշուշտ, ուներ առավել նախնական լինելու առավելություններ: Անանունն օգտվել է ժողովրդական ավանդություններից[6], որոնց մեջ առավել ստուգությամբ արտացոլք է գտել հայոց դիցական անցյալում Բագրատունիների մասին եղած ավանդապատումը, որտեղ դիցաբանությունը և կրոնը սերտորեն միահյուսված են: Դիցաբանությունը կրոն չէ, այլ անձնականացված հրաշագործ պատմություն[7]: Տորք աստծու մասին ավանդական պատումը, Անանունի կողմից Անգեղ և Բագարատ անունները միահյուսելը, հիրավի, դրա վկայությունն է:

Մի կարծիքի համաձայն՝ «Շամբատ Բագարատը[8] Մծբինից Տրդատի հետ Հայաստան եկած ադիաբենցի զորավարներից էր, որն իր հավատարմությամբ ու ռազմական կարողություններով արժանացել էր ոչ միայն Տրդատի, այլև Վաղարշի հատուկ ուշադրությանը և, անկասկած, նրա այդ ընդունակությունները նկատի ունենալով, Մծբինում թագադրության արարողության ժամանակ նրան դարձրել էին թագադիր-թագակապ ասպետ: Տրդատը հայկական գահին տիրանալուց հետո այդ իրավունքը շնորհում է Շամբատ Բագարատին և այն դարձնում ժառանգական …»: Ի լրումն դրա Վաղարշակը (Տրդատը) Բագարատին նշանակում է նաև «կուսակալ, բիւրերի և հազարների իշխան», տալիս նրան բազում մենաշնորհներ»[9]: Ավելին, «Բագրատունիների շնորհիվ մ. թ. I դարի երկրորդ կեսին

---

[4] *Գ. Ս ա ր գ ս յ ա ն. Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան 1966, էջ 46: Շամբատ անունը չի հանդիպում հրեից լեզվում (տե՛ս Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1948, էջ 538): Փորձ է արվել այդ անունը նույնացնել հռոմեական դարաշրջանում հիշվող Սամբատիոն (կամ Սանբատիոն, Սաբատիոն) անձնանվան հետ, ի մտի առնելով նաև այն, որ, իբր, Խորենացու հիշատակած Շամբատը «նորադարձ» էր, ընդունել էր հրեաների կրոնը, ուներ հրեական անուն, և շրջապատը նրան հրեա էր համարում [տե՛ս* Р. М а н а с е р я н. К вопросу о вероисповедании населения городов Армении (I в. до н. э. – IV в. н. э.).– ИФЖ, 1989, №2, с. *202]: Մեկ այլ կարծիքի համաձայն՝ Շամբատի մասին Խորենացու հաղորդումը պետք է վերագրել ոչ թե Բագրատունիներին, այլ Հայաստանի քաղաքների հրեա բնակչությանը (տե՛ս Գ. Ս ա ր գ ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 75–76):*

[5] *Տե՛ս Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի,* II, *Գ, էջ 104–105, Է, էջ 110:*

[6] Н. А д о н ц. “Начальная история Армении” у Себеоса в ее отношениях к трудам Моисея Хоренского и Фауста Византийского.– Византийский временник, т. VIII, вып. 1–2. СПб., 1901, с. 96.

[7] А. Л о с е в. Философия, мифология, культура. М., 1991, с. 134, 165–166.

[8] *Խորենացու «Շամբատայ Բագարատ» կապակցությունը նշանակում է «Շամբատից սերած»: Շամբատին պատմիչը հիշում է Նարուգոդոնոսորի ժամանակ, մինչդեռ Բագարատը, ըստ նրա, ժամանակակից է Տրդատ I-ին:*

[9] *Հ. Մ ե լ ք ո ն յ ա ն. Ադիաբենի պետությունը և Հայաստանը, Երևան, 1980, էջ 132-133: «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական ութհատորյակում (հ. I, Երևան, 1971, էջ 747) կարդում ենք. «Մովսես Խորենացու մոտ հայտնի Շամբատ Բագարատը (Անանունի Բագարատ Փառազյանը) ժամանակակից էր Վաղարշ I-ին ու Տրդատ I-ին և, Ադիաբենի թագավորներին հետևելով, ընդունել էր հրեական կրոնը (ավելի ճիշտ՝ նախնական քրիստոնեության ուսմունքներից մեկը): Ինչպես*

քրիստոնեական վարդապետության առաջին ծիլերը բերվել են Հայաստան և, անկասկած, հետզհետե նրանց միջոցով էլ այստեղ կազմավորվել է քրիստոնեական համայնքներից մեկը»: Եվ քանի որ նոր կրոնը վտանգ էր ներկայացնում երկրի համար, ուստի Տրդատ I-ին հաջորդած հայոց թագավորը գլխատել է տալիս երկուսին[10]:

Սակայն ո՛չ հայ և ո՛չ էլ օտար աղբյուրները որևէ վկայություն չունեն այս մասին: Ըստ Մովսես Խորենացու, Արշակ Մեծը (Վաղարշ I-ը) եղբորը՝ Վաղարշակին թագավորեցնելով Հայաստանում, «քաղաք թագաւորութեան տայ նմա զՄծբին…»[11]: Բայց հռոմայեցի ժամանակագիր Տակիտոսի (մ. թ. I դ.) մոտ նման վկայություն չկա: Նրա հաղորդմամբ Տրդատը Վաղարշ I-ի (Վոլոգեսի) կողմից թագավորական խորհրդում հռչակվում է թագավոր[12]: Հասկանալի է, Տրդատ I-ը՝ որպես հայոց թագավոր, գերադասելու էր մայրաքաղաք դարձնել ոչ թե Մծբինը, այլ Արտաշատը կամ Տիգրանակերտը, որոնց, ինչպես հայտնի է, հռոմայեցիներն ուղղեցին իրենց գլխավոր հարվածները: Իհարկե, չէր բացառվում պարթևներից կախյալ Ադիաբենեի կողմից Տրդատին զորամաս տրամադրելը[13]: Բայց դա բնավ չի նշանակում, թե վերջինիս մեջ էր նաև Բագարատը:

Հարկ է նաև նկատի առնել այն հանգամանքը, որ երբ մ. թ. 66 թ. Տրդատ I-ը մեկնեց Հռոմ՝ Ներոն կայսեր մոտ՝ վերջինիս կողմից թագադրվելու նպատակով, ըստ Դիոն Կասսիոսի, Տրդատին ուղեկցում էին «երեք հազար պարթևական, ինչպես նաև մեծ թվով հռոմայեցի հեծյալներ»[14]: Ինչպես տեսնում ենք, ուղեկիցների մեջ հայեր չեն հիշվում, ինչը, անշուշտ, վկայություն է վերջիններիս նկատմամբ Տրդատ I-ի անվստահության մասին: Ըստ Մովսես Խորենացու, Տրդատ I-ին հաջորդած հայոց թագավորը նույնիսկ պատժում է Բագարատի որդիներին՝ պարսից կրոնը չընդունելու պատճառով[15]:

Անանունի հաղորդումից պարզ է դառնում, որ երբ պարթևների թագավոր Արշակը (Վաղարշը) Արշակ Փոքրին (Տրդատ I-ին) ուղարկում է Հայաստան թագավորելու, Արամանյակի սերունդներից Բագարատ Փառազյանը զորքով դիմավորում է նրան Հայաստանում: «Յայնմ ժամանակի,– գրում է Անանունը,– թագաւորեցոյց Արշակ զորդի իւր զԱրշակ Փոքր[16] կոչեցեալ ի վերայ աշխարհիս Հայոց ի

երևում է, այս Բագարատը պարթևներին կողմնակից հայ մեծամեծներին … էր գլխավորում և նրանց հետ միասին ապաստան էր գտել Մծբինում»: Այս կարծիքը հաստատելու համար որևէ ապացույց չի բերվում:

[10] *Հ. Մ ե լ ք ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 134:*

[11] *Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, I, Ը, էջ 28:*

[12] *Տե՛ս* К о р н е л и й Т а ц и т. Сочинения в двух томах, т. I. Л., 1970, с. 281.

[13] *Տակիտոսի վկայությամբ Վաղարշ I-ի հրամանով Մոնես զորապետը, հետն ունենալով ադիաբենցի զորամաս, շարժվում է Հայաստան՝ Տրդատին զորակցելու համար (տե՛ս նույն տեղում, էջ 280):*

[14] *Տե՛ս Դ ի ո ն Կ ա ս ս ի ո ս. Հռոմեական պատմություն.– «Հովսեպոս Փլավիոս և Դիոն Կասսիոս», թարգմ., առաջաբան և ծանոթագրութ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 203:*

[15] *Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, II, Թ, էջ 117:*

[16] *Արշակ Փոքրը նույն Վաղարշակն է, որին Անանունը սխալմամբ համարում է Արշակ Մեծի որդի, մինչդեռ Խորենացին և Պրոկոպիոս Կեսարացին նրան գիտեն որպես Արշակ Մեծի եղբայր (այս մասին տե՛ս Գ. Ս ա ր գ ս յ ա ն. Մովսես Խորենացու «Հայոց պատմության»*

Մծբին քաղաքի… Եւ յուղարկէ զնա ի Մրծանայ ընդ յարևմուտս զաւրու մեծաւ եւթանասուն հազարաց սպառազինաց. և մեծամեծ իշխանաւք նախարարաց հազարաց բիւրաւորաց, որում ոչ ոք կարէր զդէմ ունել պատերազմաւ: Սմա ընդ առաջ ելանէ Բագարատն Փառազեան յորդւոցն Արամենակայ նախարար մեծ հանդերձ զաւրու…պսակէ զնա ի թագ հայրենի. և նստուցանէ զնա ի վերայ ոսկիապատ ականակուռ գահոյիցն…»[17]: Եթե Բագարատը Հայաստանում զորքով ընդառաջ է ելնում Տրդատ I-ին, ուրեմն նա ոչ թե Տրդատի հետ էր եկել (և այն էլ Ադիաբենից), այլ գտնվելիս է եղել իր հայրենիքում՝ Հայոց աշխարհում: Այս հաղորդմամբ Անանունը դարձյալ Բագարատին համարում է Հայկ նահապետի որդի Արամանյակի զավակ, դրանով իսկ հավաստում նրա տոհմի բնիկ լինելու իրողությունը:

Ըստ Անանունի՝ «որդիքն Բագարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանս արևմտից, այս ինքն է Անգեղ տուն»[18]: Այս վկայությունից կարելի է հետևեցնել, որ Անգեղ տան իշխանությունը Բագրատունիների մի ճյուղի տոհմական ոստանն էր[19]: Անանունի հաղորդումն այն մասին, որ Անգղն «աստուած կոչեցին» [20], թույլ է տալիս կարծելու, որ Անգղը հին Հայաստանում եղել է պաշտամունքի կենտրոն: Եվ քանի որ այն գտնվում էր Բագրատունիների տիրույթ Անգեղ տուն գավառում, ուստի պետք է լիներ այդ տոհմի պաշտամունքային կենտրոնը: Ենթադրվում է, որ Անգղում թաղվել են Արտաշիսյան հայոց արքաները[21], ինչը, սակայն, դժվար է ապացուցել: Գավառը Բագարատ և Անգեղ անվանելը ևս վկայում է պաշտամունքի այդ կենտրոնի ու Բագրատունի տոհմի առնչակցության մասին: Ըստ երևույթին, Բագրատունիներն ունեցել են նաև քրմական գերակա իրավունքներ: Այսպես կարծելու համար հիմք կարող է ծառայել նաև Խորենացու մի վկայությունը, որի համաձայն Արտաշես թագավորի օրոք Բագրատունի Սմբատը սպանում է Հայաստանի քրմապետ Երվազին՝ Երվանդ վերջինի եղբորը, որից հետո Արտաշեսը «պարգևէ Սմբատայ զծառայսն Երուազայ», իսկ Սմբատը «ի վերայ բագնացն կացուցանէ զընտանի Արտաշիսի, աշակերտ մոգի ուրումն երազահանի, որ յայն սակս և Մոգպաշտէ անուն կարդային»[22]:

Այս վկայությամբ հավաստվում է, որ Սմբատ Բագրատունին ոչ միայն վերացնում է Երվանդունի քրմապետների իշխանությունը, այլև կարգում է նոր քրմապետ: Հասկանալի է, Բագրատունի իշխանը դա կարող էր անել ոչ միայն իր զինական իրավազորությամբ, այլև պաշտամունքի ոլորտում իր տոհմի ունեցած մեծ ազդեցությամբ: Այս տեսակետից ուշագրավ է Խորենացու մեկ այլ հաղորդու-

---

ժամանակագրական համակարգը, Երևան, 1965, էջ 127–128: Տե՛ս նաև Ս ե բ ե ո ս, էջ 260–261, ծանոթագրութ. 66):

[17] *Ս ե բ ե ո ս, էջ 53–54:*

[18] *Ս ե բ ե ո ս, էջ 51:*

[19] Н. А д о н ц. Армения в эпоху Юстиниана. СПб., 1908, с. 413.

[20] *Ս ե բ ե ո ս, էջ 51:*

[21] *Գ. Ս ա ր գ ս յ ա ն. Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, էջ 64:*

[22] *Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, II, ԽԸ, էջ 175:*

մը, որի համաձայն Մաժանը, որին սնուցանել էր Բագարատը[23], կամենում էր դառնալ «քրմապետ միանգամայն և սպարապետ արևմտից»[24]: Հավանաբար, Մաժանը ևս սերում էր Բագրատունիներից և օժտված էր ոչ միայն պաշտամունքային, այլև ռազմական գործառույթներով: Հայտնի է, որ քրմապետերն իրենց տիրույթները պաշտպանելու համար զորքեր էին պահում, նրանց մեհյանները (Անին, Երիզան և այլն) հիշվում են և որպես բերդեր: Ընդսմին, քրմապետերը նաև զորապետեր էին[25]: Բագրատունիների գերակայության ներքո նշված երկու գործառնությունների միատեղումը, անշուշտ, իր արտացոլումն է գտել նաև Տորք Անգեղի մասին ավանդության մեջ, որտեղ Տորքը հանդես է գալիս ռազմի գործառնությամբ, իսկ Անգեղը, ինչպես նշվեց, անձնավորում է պաշտամունքը: Տորք դիցանվան վաղագույն՝ խեթական Tarhu *(սեռականում՝* Tarun*) անվանաձևը պահպանվել է հայոց հեթանոսական պաշտամունքի հնագույն օրրան Տարոն (Տարաւն) գավառանվան մեջ: Տարոնում ևս պաշտում էին Տորքին[26]: Մովսես Խորենացին Տորքին գիտե որպես «ի զաւակէ Պասքամայ, ի Հայկայ թոռնէ, տուրք անուն կոչեցեալ … որին ձայնէին Անգեղեայ»: Վերջինիս Վաղարշակը «հաստատէ կուսակալ արևմտից»[27]: «Անգեղեայ» ածականը նշանակում է, որ Տուրքը համարվել է Անգեղից սերված կամ Անգեղի տուրք: Գրիչների մեղքով Տուրք-ի «ւ» տառը դուրս է ընկել, ուստի այն դարձել է Տորք[28]: Խորենացու վերը բերված վկայության մեջ, անշուշտ, արտացոլված է նախնական ժամանակներում Հայաստանում Տորքի պաշտամունքի մասին եղած ավանդազրույցը: Փաստորեն, Տորքը հանդես է գալիս որպես դիցաբանական երկու անձերի՝ Տորքի և Անգղ աստծու մարմնավորում[29]: Այն փաստը, որ Տորքը կարգվել է Հայաստանի արևմտյան կողմերի կուսակալ, և կոչվել է Անգեղ, թույլ է տալիս կարծելու, որ նրա մասին եղած առասպելներում արտացոլված է նաև Բագրատունի տոհմի անցյալը, քանի որ վերջինիս նախարար Շամբատը, ինչպես վերը նշվեց, Վաղարշակ թագավորի կողմից նշանակվում է Հայաստանի հենց այդ մասի կողմնակալ, իսկ Անգղն Անգեղ տուն գավառով հանդերձ, ըստ Անանունի, Բագարատի որդիների ժառանգական տիրույթն էր[30]:*

Տորքին Հայաստանի արևմտյան կողմերի կուսակալ նշանակելու վերաբերյալ Խորենացու վերը նշված հաղորդումը, անշուշտ, ավելի վաղ ժամանակներում, Հայասա պետական կազմավորման սահմաններում այդ աստծու պաշտամունքի

---

[23] *Նույն տեղում, III, ԾԵ, էջ 185–186:*

[24] *Նույն տեղում, էջ 186:*

[25] А. П е р и х а н я н. Храмовые объединения Малой Азии и Армении (IV в. до н. э.–III в. н. э.). М., 1959, с 78–80.

[26] *Տե՛ս Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 96-97, 100–101:*

[27] *Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, II, Ը, էջ 114:*

[28] *Տե՛ս Մ. Ա բ ե ղ յ ա ն. Հայ վիպական բանահյուսություն.– «Երկեր», հ. Ա, Երևան, 1966, էջ 56–59:*

[29] *Հմմտ.* Э. П е т р о с я н. Боги и ритуалы древней Армении. Ереван, 2004, с. 94–95.

[30] *Ա ե բ ե ռ ս, էջ 31:*

հեռավոր արձագանքն է: Հայասան խեթական պետության հարևանն էր: Տորքը համարվել է խեթական Տարկու աստծու հայկական տարբերակը[31]*:*

Խեթական Տարկու աստվածության մուտքը Հայկական լեռնաշխարհ, հավանաբար, կատարվել է այն ժամանակ, երբ հնդեվրոպական ժողովուրդներն արդեն բաժանվել էին միմյանցից, և նրանց լեզուները վերածվել էին հնդեվրոպական լեզվի տարբեր բարբառների: Ընդսմին, հայասերենը դասվում է խեթական լեզուների շարքը[32]*: Տարկու աստվածությունը հայերին է փոխանցվել լուվացիների միջոցով*[33]*, որոնցից հայերը փոխառել են շատ բառեր*[34]*: Տարկուն պաշտվում էր նաև հնդեվրոպական ուրիշ ժողովուրդների մոտ: Սկանդինավյան Տորը նման է Տորքին. քաջություններ է գործում, նա ուժեղ և միայնակ պատերազմող է, իշխում է ամպրոպին, քամիներին, անձրևին*[35]*: Տարկուն ամպրոպածին, շանթաձիգ աստվածություն էր: Նույն հատկանիշներով էին օժտված նաև լուվացիների* Tarhunts-*ը, լիկիացիների* Trqq- *ը, հայոց Տորքը, խուռա-ուրարտական Թեշուբը, նաև Թեյշեբան*[36]*: Թեշուբը պաշտվում էր վաղ հայկական պետական կազմավորում Շուբրիայում*[37]*: Անշուշտ, նույն ամպրոպածին աստվածը տարբեր շրջաններում կարող էր կրել տարբեր անուն: Կիլիկիայի քրմական պետության կենտրոն Օլբայում պաշտվող Զևսը նույնանում էր խեթական Տարկուի հետ*[38]*:*

Հայասա կազմավորման մեջ ընդգրկված հնագույն հայկական Ազի երկիրը տարածվում էր Ճորոխ գետի ավազանում և հյուսիսում ձգվում էր մինչը Սև ծով[39]*: Տուրքի (Տորքի) միակ հայտնի սխրագործությունը տեղի է ունենում Սև ծովի ափին, Հայասայի տարածքում կամ նրան մերձակա վայրում*[40]*: Հայասայի մեջ մտնում էր նաև Բարձր Հայքի Սպեր գավառը, որը Փավստոս Բուզանդը և Սեբեոսը հիշատակում են որպես Բագրատունիների տոհմական տիրույթ*[41]*: Տորք Անգեղեայի պաշտամունքը Հայասական պետական կազմավորման հին պաշտամուն-*

---

[31] *Տե՛ս* Ն. Ա դ ո ն ց. *Տորք Աստուած հին Հայոց.– «Յուշարձան» գրական ժողովածու, Վիեննա, 1911, էջ 393,* N. A d o n t z. Tarkou cher les anciens Arméniens.– REA, 1927, fasc. 1, p. 185–187; Г. К а п а н ц я н. Chetto-armeniaca.я Эривань, 1931, с. 36, 45; *Ա ս տ. Խ ա չ ա տ ր յ ա ն. «Տորք Անգեղեայ», հին մատենագրության և նոր բանասիրության մեջ.– «Տեղեկագիր ՀՍԽՀ գիտության և արվեստի», 1931, № 5, էջ 42 և հտ.:*

[32] *Տե՛ս Գ. Ջ ա հ ո ւ կ յ ա ն. Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970, էջ 124:*

[33] Г. К а п а н ц я н. Хайаса–колыбель армян.– Историко-лингвистические работы, т. I, Ереван, 1956, с. 202.я

[34] И. Д ь я к о н о в. Типы этнических передвижений в ранней древности.– Древний Восток, 4, Ереван, 1983, с. 21, прим. 23.я

[35] Ж. Д ю м е з и л ь. Верховные боги индоевропейцев. М., 1986, с. 139–140.я

[36] И. Д ь я к о н о в. К вопросу о символе Халди.– Древний Восток, 4, с.192.я

[37] *Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 43–44:*

[38] А. П е р и х а н я н. *Նշվ. աշխ., էջ 59:*

[39] *Տե՛ս Վ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայաստանը մ. թ. ա. XV–VII դարերում, Երևան, 1998, էջ 35:*

[40] А. П е т р о с я н. Армянский эпос и мифология. Ереван, 2002, с. 33–34.

[41] *Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Փավստոս Բուզանդ), Ս. Պետերբուրգ, 1883, V, ԽԴ, էջ 216, Ս ե բ է ո ս, էջ 165: Սպերում հիշատակվող Սմբատավան քաղաքը Բագրատունիների իշխանանիստն էր՝ կառուցված մ. թ. ա. II–I դարերում (տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 4, Երևան, 1998, էջ 635):*

քի շարունակությունն էր[42]*: Ենթադրվում է, որ Երվանդունիների դամբարանատեղին Անգղում էր, և քանի որ նրանք իրենց սերած էին համարում Տորք աստծուց, որը նրանց պաշտպանն ու հովանավորն էր, նաև նույնական էր Բագրատունիների նախահոր հետ, ուստի վերջիններս, իբր, ծագել են Երվանդունիներից (Օրոնդյաններից)*[43]*: Բայց Երուանդ դիցանունը ծագում է ոչ թե Տորքից, այլ հնդեվրոպական* perua-perwa *դիցանունից*[44]*: Բագրատունի իշխան Սմբատը Երվանդ վերջինի սպանողներից մեկն էր և, ինչպես վերը նշվեց, սպանեց նաև նրա եղբորը՝ քրմապետ Երվազին: Եթե Սմբատ Բագրատունին, իրոք, Երվանդունի լիներ, հազիվ թե նման քայլի դիմեր: Նա չէր կարող նաև վայելել Արտաշեսի վստահությունը, որը, ինչպես Խորենացին է հավաստում, Երվանդի և նրա տոհմի անհաշտ ախոյանն էր*[45]*:*

Անշուշտ, Տորքին երկրպագել են նաև Բագրատունիների տիրույթներում: Նրա պաշտամունքը Անգեղ տուն գավառում, միահյուսվելով Անգեղ անունով բուն հայկական աստծու պաշտամունքին, կոչվել է Տորք Անգեղեայ[46]*: Տորք Անգեղեան մարմնավորում էր հայրենիքն օտարներից պաշտպանելու, թշնամիներին հաղթելու, մշակութային հերոսի, արարողի, արձաններ կերտողի գաղափարը*[47]*, որը նվիրագործված է հայ ժողովրդական վեպում՝ «Սասնա ծռեր»-ում, ի դեմս նրա հերոսների*[48]*: Մովսես Խորենացու մոտ նույնպես Բագրատունիներն օժտված են հայրենի երկիրը պաշտպանողների հատկանիշներով: Նրանք երկրի արևմտյան կողմերի կուսակալ-բդեշխներն էին, հետևաբար, կատարում էին Հայաստանը արևմտյան կողմերից պաշտպանելու պարտականությունը: Հայտնի է, որ քրիստոնեական կրոնը ժխտողական վերաբերմունք ուներ հեթանոսական հավատալիքների, դիցաբանության հանդեպ: Սակայն Խորենացին այլ վերաբերմունք ունի Տորքի նկատմամբ, քանի որ Անգեղը, որպես Բագրատունի տոհմի պաշտամունքային կենտրոն, իր նշանակությունը պահպանեց նաև քրիստոնեության ժամանակ*[49]*՝ խորհրդանշելով հայրենի երկիրը ոտնձ ուժերից պաշտպանելու նվիրական գաղափարը: «Ասպետ» տիտղոսը, անշուշտ, վկայություն է ռազմի ոլորտում Բագրատունի տոհմի խաղացած ականավոր դերի: «Ասպետ» արտահայտությունը ծագումնաբանորեն աղերսվում է զինվորական գործառույթների հետ: Այն,*

---

[42] *Տե՛ս* C. T o u m a n o f f. Studies in Christian Caucasian History. Georgetown, 1963, p. 299-300, 319, 320:

[43] *Նույն տեղում, էջ 300-306:*

[44] *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 104–105:*

[45] *Տե՛ս Մովսես Խորենացի, II, գլ. ԽԴ, ԽԶ, էջ 169–171:*

[46] *Տե՛ս Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 101:*

[47] Г. В а р д у м я н. Дохристианские культы армян *(«Հայ ազգագրություն և բանահյուսություն», 18, Երևան, 1991, էջ 100–101): Խեթական լեզվում* tarh *եզրն ունի «հաղթել» իմաստը (տե՛ս* Т. Г а м к р е л и д з е, В. И в а н о в. Индоевропейский язык и индоевропейцы, т. II. Тбилиси, 1984, с. 794, 822).

[48] *Մ. Ա բ ե ղ յ ա ն. նշվ. աշխ., էջ 61-62:*

[49] *Ն. Ա դ ո ն ց. Տորք Աստուած հին Հայոց, էջ 392:*

ինչպես հայտնի է, կազմված է պահլավերենի aspa *(« ձի») և* pat *(«պետ», «տեր») բառերից*[50]*:*

Ըստ Անանուն պատմիչի՝ Արշակ Փոքրը (Տրդատ I -ը) հայոց թագավոր կարգվելուց և Բագարատի ձեռքով թագով պսակվելուց հետո վերջինիս նշանակում է «ասպետ Հայաստան երկրին, որ էր իշխան և հրամանատար, ամենայն թագաւորութեանն հրամանաց գլուխ, և հայր արքայի, և եղբայր. որում ետ իշխանութիւն տէրութեանն այնորիկ»[51]*: Ըստ երևույթին, Բագարատը Տրդատի կողմից կարգվել է Հայաստանի իշխանապետ, որն օժտված էր նաև թագավորահոր իրավազորությամբ: Վերջինս, ինչպես հայտնի է, գերակա դիրք ուներ Արևելքում: Ուստի, հասկանալի է դառնում Անանունի՝ «ետ իշխանութիւն տէրութեանն այնորիկ» արտահայտությունը: Բագարատը ասպետ տիտղոսը կրում էր, անշուշտ, երկրի պաշտպանության բնագավառում ունեցած գործունեության շնորհիվ: Ուշագրավ է, որ, ըստ Ագաթանգեղոսի Պատմության հունական խմբագրության («Վարքի»), Տրդատ Մեծի օրոք Գրիգոր Լուսավորչի կողմից Սպեր գավառի եպիսկոպոս կարգված Ագապիոսի հետ էր նույն գավառի «իշխան սպարապետը»*[52]*: Ընդ որում, «Վարք»-ի բնագրի «սպարապետ» բառը Ժ. Գարիտն ուղղում է «ասպետի»* (ασπετης) *ձևով*[53]*: Գուցե բնագրի «սպարապետ» եզրը ավանդության ուժով պահպանվել է Ագաթանգեղոսի հնագույն ձեռ ագրերում, որից օգտվել է հունարեն խմբագրության կազմողը: Հարկ է նկատի առնել այն հանգամանքը, որ հայոց Արտաշեսյան թագավորների օրոք Բագրատունիները, իրոք, վարել են սպարապետի պաշտոնը: «Քարթլիս ցխովրեբայում» Արտաշես* I*-ի սպարապետ է հիշվում Սմբատ Բյուրատյանը, որը պարտության է մատնում վրացիներին ու օսերին, մարտնչում պարսիկների դեմ*[54]*: Տիգրան Մեծի ժամանակ, Բագադատեսը, որ Ասորիքի ստրատեգն էր, երբ Լուկուլլոսը հարձակվեց Հայաստանի վրա, փութաց զորակից լինել Տիգրանին: Բայց Տրդատ Մեծի ժամանակ արդեն սպարապետներ են հիշվում Մամիկոնյանները*[55]*: Ժ. Գարիտը վերոնշյալ սրբագրումը կատարել է, հավանաբար, ելնելով այդ իրողությունից:*

---

[50] *Հ р. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1971, էջ 274: Ռ. Դյուլորիեն «ասպ» արմատից կազմված է համարում «ասպահապետ» («զորապետ», «սպարապետ») բառը՝ փոխառնված պահլավերենից (տե՛ս նույն տեղում, էջ 271): «Ասպետ» եզրը կազմված է համարվում նաև հայերեն «արս» («կողմ», «ծայրամաս») և «պետ» բառերից՝ ստանալով «արսպետ» ձևը: Ընդ որում, «աս» բաղադրիչի նախնական ձև է համարվում «արս»-ը (տե՛ս Ս. Պ ե տ р о ս յ а ն. «Ասպետ» տիտղոսի և «ասպետություն» գործակալության նախնական բնույթի պարզաբանման փորձ.– ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1983, № 4, էջ 82–84: Սակայն «աս» արմատը ծագում է հնդեվրոպական նախալեզվի ag «ասել» արմատից և հայերենում ունի «ասածը», «խոսք» իմաստը (տե՛ս Հ р. Ա ճ а ռ յ а ն. նշվ. աշխ., էջ 265–266):*

[51] *Ս է բ է о ս, էջ 54:*

[52] G. G а r i t t e. Documents pour l'Etude du livre d'Agathange. Vaticano, 1946, p. 103.

[53] *Տե՛ս նույն տեղում, էջ 164, 227–228, 429:*

[54] *Տե՛ս Լ. Մ է լ ի ք ս է թ - Բ է կ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 158–159:*

[55] *Հունարեն «Վարք»-ում ևս նշվում է, որ սպարապետությունը «պատկանում էր Մամիկոնյան տոհմին» (տե՛ս* G. G а r i t t e. *Նշվ. աշխ., էջ 103): Փավստոսը գրում է, որ Բագրատունիները «թագակապքն լեալ էին ի բնմէ ազգին թագաւորութեան Արշակունոյ» (տե՛ս Փ а վ ս տ о ս Բ о ւ զ а ն դ, V, ԽԴ, էջ 216):*

Ենթադրվում է, որ «ասպետ»-ը սոսկ Բագրատունիների ընտանեկան տիտղոսն էր՝ զուրկ պաշտոն արտահայտող բովանդակությունից, և որ իբր Բագրատունիների «Ասպետունի» տոհմանունն առաջինից ավելի նախնական էր[56]*: Բայց Անանունի հավաստմամբ Բագարատից սերված Բյուրատը «ծնաւ զԱսպատ»*[57]*: Ըստ այդմ, Բագարատ անունն ավելի հին է, քան Ասպատը (Ասպետը): Հարկ է նշել նաև, որ Բագրատունիներն Արշակունի հայոց թագավորների ժամանակ շարունակել են կրել «ասպետ» տիտղոսը՝ շնորհիվ այդ շրջանում երկրի պաշտպանության ոլորտում իրենց խաղացած նշանավոր դերի: Այն փաստը, որ Գահնամակում Բագրատունյաց նախարարը նշված է երկրորդ տեղում (Սյունիքի իշխանից հետո) «Ասպետ» անվամբ*[58]*, վկայում է երկրի ռազմաքաղաքական կյանքում նրա խաղացած կարևոր դերի մասին: Գահնամակի կազմողը, անշուշտ, Բագրատունուն «Ասպետ» կոչելով, նաև դա է նկատի ունեցել: Նշելի է, որ նույն փաստաթղթում որոշ նախարարներ վկայված են ոչ թե տոհմանվամբ, այլ ըստ իրենց վարած գործառույթների («Մաղխազունի», «Բասենոյ դատաւորն», «քաղաքապետն արքունի», «որսապետն արքունի»): Ագաթանգեղոսի Պատմության հունական խմբագրությունը Բագրատունի նախարարին Տրդատ I թագավորի օրոք հիշատակում է «ասպետության իշխան» ձևով*[59]*: Ուխտանեսը, ելնելով Գահնամակից, դարձյալ հայ նախարարական գահակարգում նշում է «ասպետ Բագրատունի»*[60]*:*

Բագրատունիների «ասպետ» տիտղոսը պահպանվեց նաև հետագա դարերում: Ղազար Փարպեցին գրում է, որ 482 թ. Հայաստանում Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ հարուցված ազատագրական պատերազմի ժամանակ ապստամբների ստեղծած կառավարության գլուխ մարզպանի իրավազորությամբ կարգվեց «ասպետն Սահակ»: Վահանը հայոց զորքը ռազմի դաշտ է տանում «սքանչելի ասպետաւն Սահակաւ մարզպանաւ», իսկ կենտրոնի զորասյունը «տայր ի ձեռն լաւի առն Սահակայ մարզպանին ասպետի»: Վրաց ապստամբներին զորակցելու նպատակով Վրաստան մեկնած հայոց զորքի հետ էր նաև «զերանելին ասպետն Սահակ»: Մարտում զոհվածների մեջ պատմագիրը հիշում է նաև «սրբոյ ասպետին Սահակայ»[61]*: Մեբեռսը Հայաստանի մարզպան Վարազտիրոց Բագրատունուն* (628–634)՝ *Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունի Բազմահաղթի որդուն, հիշում է «ասպետ» տիտղոսով: Վարազտիրոցի որդի Սմբատը ևս կրում էր նույն տիտղոսը*[62]*: Ըստ երևույթին, ոչ բոլոր Բագրատունիներն էին կրում այդ պատվատիտղոսը: Այսպես, Սմբատ Բազմահաղթին, որին պարսից արքա Խոսրով Փարվեզը հատուկ հրովարտակով «պատուով մեծացուցանէ ի վեր*

---

[56] C. T o u m a n o f f. *Նշվ. աշխ., էջ 325:*

[57] *Մ ե բ ե ռ ս, էջ 51: «Ասպատ»-ն «ասպետ»-ի աղավաղված ձևն է (այդ մասին տե՛ս նույն տեղում, էջ 200, ծան. 34):*

[58] *Տես* Н. А д о н ц. Армения в эпоху Юстиниана, с. 249.

[59] G. G a r i t t e. *Նշվ. աշխ., էջ 72:*

[60] *Տե՛ս Ո ւ խ տ ա ն է ս ե պ ի ս կ ո պ ո ս. Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, I, ԻԷ, էջ 40:*

[61] *Տե՛ս Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխ. Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904, էջ 122, 129, 134, 135, 141:*

[62] *Տե՛ս Մ ե բ ե ռ ս, էջ 132, 143–144, 162–163:*

քան զամենայն մարզպանս իւրոյ տերութեան առնելով...»[63]*, Մեբեռսը կամ Ուխտանեսը երբեք չեն հիշում «ասպետ» վերադիրով: Արաբական տիրապետության ժամանակ՝ VIII դ. սկզբներին, հիշվում է հայոց Սմբատ «ասպետը», որը, անշուշտ, Բագրատունի էր*[64]*:*

Պրոկոպիոս Կեսարացին 536 թ. Բյուզանդիայի Հուստինիանոս I կայսեր դեմ հայերի ապստամբության ժամանակ հիշում է «մեծ և բազմամարդ Ասպետյանների տոհմը»[65]*, որը, հավանաբար, նույնական է Բագրատունիների հետ*[66]*:*

Բագրատունիները, Անանունի հավաստմամբ, վաղագույն ժամանակներից իշխել են Հայաստանի արևմտյան կողմերում[67]*: Այս հաղորդումը թույլ է տալիս կարծելու, որ նրանք վարել են կողմնակալ բդեշխների պաշտոնը: Բդեշխությունների ձևավորումը դրվում է Տիգրան Մեծի օրոք*[68]*, բայց դրանք ստեղծված պետք է լինեին հայոց պետականության արշալույսին, նախաուրարտական ժամանակներում*[69]*, թեև այդ մասին ուղղակի վկայություններ չկան: Ստույգ հայտնի չէ նաև, թե բդեշխությունները հարևան Պարսկաստանում երբ են սկզբնավորվել: Հայերեն «բդեշխ» բառը փոխառված է համարվում պահլավերենից*[70]*: Գ. Ղափանցյանի*

---

[63] *Նույն տեղում, էջ 99:*

[64] *Տե՛ս* Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. *Պատմութիւն Աղուանից աշխարհի, աշխ. Վ. Առաքելյանի, Երևան, 1983, III, ԺԸ, էջ 321,* Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. *Պատմություն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 73:*

[65] *Տե՛ս* Պ ր ո կ ո պ ի ո ս Կ ե ս ա ր ա ց ի. *թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրութ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 81:*

[66] *Հմմտ.* Յ. Մ ա ր կ ո ւ ա ր տ. *Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, Վիեննա, 1913, էջ 3: Ասպետ անվամբ զորապետներ, ազնվականներ են հիշվում նաև* XI-XII *դդ. Բյուզանդիայում (տե՛ս* А. К а ж д а н. Армяне в составе господствующего класса Византийской империи в XI–XII вв. Ереван, 1975, с. 44–46*):*

[67] *Մ ե ր ե ռ ս, էջ 51:*

[68] J. M a r q u a r t. Eranšahr nach der Geographie des ps Moses Xorenaci. Berlin, 1901, S. 172; Н. А д о н ц. Армения в эпоху Юстиниана, с. 283.

[69] *Ս. Կ ր կ յ ա շ ա ր յ ա ն. Բդեշխությունների առաջացումը Հայաստանում.– ՊԲՀ, 1966, № 4, էջ 261: Բայց դժվար է համաձայնել հարգո հեղինակի այն կարծիքի հետ, որ Մովսես Խորենացին բդեշխությունների ծագումը դնում է Սկայորդու ժամանակներում (տե՛ս նույն տեղում, էջ 258): Անշուշտ, Սկայորդու օրոք կարող էին լինել բդեշխությունների գործառույթներ, բայց Խորենացու վկայությունը բդեշխությունների մասին վերաբերում է ավելի ուշ ժամանակներին: Պատմահայրը գրում է, որ Սկայորդին Արծրունիների նախնի համարված Սանասարին բնակեցնում է «յարևմտից հարաւոյ աշխարհիս մերոյ»: Սանասարի սերունդներից ոմանք «յետոյ ուրեմն մտերմութիւն վաստակոց առ թագաւորսն մեր ցուցեալ՝ զբդեշխութիւն կողմանցն արժանաւորեցան առնուլ» (*Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, I, ԻԳ, էջ 70-71*): Պատմագիրը, ինչպես տեսնում ենք, նկատի ունի հետագայում հայոց թագավորների (հավանաբար, Արտաշիսյանների) ժամանակ կատարվածը: Ենթադրվում է, որ Տիգրան Մեծը Արծրունիներին շնորհել է Նոր Շիրականի բդեշխի տիրույթները (տե՛ս* J. M a r q u a r t. *նշվ. աշխ., էջ 176): Բայց այս մասին վկայություն չկա: Ի դեպ, Ղ. Ալիշանը Նոր Շիրականի (Նոշիրականի) բդեշխին նույնական է համարում Անգեղ տան իշխանի հետ (Ղ. Ա լ ի շ ա ն. Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 422): Ենթադրվում է նաև, որ հայոց ավանդական թագավոր Վաղարշակի օրոք էր, որ Հայաստանի սահմանակալ մեկ բյուրանոց զորքերի պետերն ստացել են «Բդեաշխ» անվանումը (տե՛ս Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Մեծ Հայքի բդեշխությունների և բդեշխութեան հաստատութեան շուրջ.– Հանդես ամսօրյա, 2001, թիվ 1-12, էջ 161-162): Անշուշտ, Վաղարշակը հաստատել է իրենից առաջ հայ նախարարների ունեցած իրավունքներն ու գահակարգը:*

[70] *Տե՛ս Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. նշվ. աշխ., էջ 434:*

կարծիքով՝ այն տեղական «սոցիալ-քաղաքական տերմին է՝ ժառանգված Փոքր Ասիայի հին մշակույթից և խեթա-լուվական լեզուներից»[71]*: Եթե, իրոք, այդպես է, «բդեշխ» բառը այդ լեզուներից կարող էին փոխառնել նաև Հայասայի բնակիչները: Սակայն հնարավոր չէ դա ապացուցել՝ վստահելի տեղեկությունների բացակայության պատճառով: Ապիանոսի կողմից հիշատակված Բագադատեսը (Մագադատես. իմա՛ Բագարատը), որը Տիգրան Մեծի կողմից նշանակվեց Ասորիքի կառավարիչ և զորակցեց Տիգրանին՝ ընդդեմ Լուկուլլոսի*[72]*, չի հիշվում «բդեշխ» տիտղոսով: Բայց դա չի նշանակում, որ այդ ինստիտուտը տվյալ պատմաշրջանում գոյություն չի ունեցել («բդեշխ» բառը կարող էր նաև անծանոթ լինել Ապիանոսին):*

Անշուշտ, բդեշխի իրավազորությամբ օժտվելու հանգամանքը էականորեն կարող էր մեծացնել Բագրատունիների ազդեցությունը հայոց արքունիքում: Ի լրումն դրա, այդ տոհմը, ինչպես նշել ենք, ուներ նաև պաշտամունքի ոլորտում գերակա ազդեցություն: Բագրատունի նախարարի թագավորահայր լինելու փաստը, անկասկած, նույնպես վկայում է արքունիքում այդ տոհմի ունեցած ազդեցության մասին:

Բագրատունիների՝ որպես Տրդատ I-ի թագադրի վերաբերյալ հնագույն հիշատակությունը, անշուշտ, Անանունի մոտ է[73]*: Սակայն դա չի նշանակում, թե հայոց արքունիքում թագադիրի պաշտոնը մինչև այդ գոյություն չի ունեցել: 1964 թ. Սիսիան-Գորիս խճուղու մոտերքում, Իշխանասար լեռան լանջին գտնված ինը տողանի արամեական արձանագրությամբ հավաստվում է, որ Հայաստանում, իրոք, թագադիրի պաշտոնը եղել է դեռևս Արտաշիսյանների օրոք: Ըստ այդ արձանագրության, Արտաշես I թագավորի պաշտոնյան՝ Նիկփառ անունով, որդին Ախշահիրսարտի, կրել է «թագադիր» տիտղոսը*[74]*: Սակայն հիմք չկա Նիկփառին Բագրատունի համարելու համար, թեև Ա. Փերիխանյանը գրում է, որ նշված արձանագրությամբ հաստատվում է «իր ժամանակ Ն. Ադոնցի կողմից արած ենթադրությունը՝ Բագրատունիների ատրպատականյան-մեդական ծագման վերաբերյալ (Ն. Ադոնցը հիմնականում առաջնորդվում էր նրանով, որ այդ տոհմի տիրույթներն ընկած էին Մակու գավառում)»*[75]*: Սակայն Ն. Ադոնցը երբեք Բագրատունիներին «մեդական-ատրպատականյան» ծագում չի վերագրել: Նա միայն նշել է, որ «Բագրատունիների դինաստիան ծագել է Հայաստանի իրանական կամ ատրպատականյան ծայրամասում»*[76]*: Ն. Ադոնցը Բագրատունիների նախնական*

---

[71] *Տե՛ս* Г. К а п а н ц я н. О двух социально-политических терминах древнего Ближнего востока.– Историко-лингвистические работы, I, с. 468–469.

[72] А п п и а н. Митридатовы войны. Сирийские дела.– Вестник древней истории, 1946, №я4, с. 309.я

[73] *Տե՛ս Ս ե բ ե ո ս, էջ 54.*я

[74] А. П е р и х а н я н. Арамейская надпись из Зангезура.– ИФЖ, 1965, №я4, с. 108.

[75] *Նույն տեղում, էջ 110: Հղվում է՝* Н. А д о н ц. Армения в эпоху Юстиниана, с. 307–308, 412–413. *Հետազոտողը, ի հաստատումն իր ենթադրության, հնչյունաբանական աղերս է տեսնում նաև արամեական Նեկֆառի և միջին մեդական* Nekfarr *անվան միջև* (А. П е р и х а н я н. Арамейская надпись из Зангезура, с. 110–111):

[76] Н. А д о н ц. Армения в эпоху Юстиниана, с. 308, 412.я

հայրենիք է համարում Բագրևանդ գավառը[77] *(նրա այս կարծիքը վիճարկվել է, իհարկե, առանց բավարար ապացույցների)*[78]*: Մեկ այլ հետազոտող գրում է. «Ախշահիրսարտ–անտիկ շրջանում առ այսօր հայտնի առաջինը Բագրատունյաց տոհմից: Արտաշես Ա-ի օրոք (189–160 մ. թ. ա.) թագադիր ասպետ Նիկեփոր թագադիրի հայրը»*[79]*: Սակայն այս անունները ծագումնաբանորեն հնարավոր չեն աղերսել Բագրատունիների հետ: Բացի այդ, նույն Արտաշեսի թոռան՝ Տիգրան Մեծի օրոք Բագրատունի տոհմի նահապետը, ինչպես տեսանք, Բագադատեսն էր, որը համարվել է Բագրատունիների նախնի*[80]*:*

Այսպիսով՝ Բագրատունիները Հայաստանի բնիկ, անդրածին տոհմերից մեկն էին, որոնք պատմական հեռավոր ժամանակներից ի վեր նշանավոր դեր են խաղացել երկրի պետական, քաղաքական և պաշտամունքային ոլորտներում՝ նպաստելով հայ ժողովրդի պետական ու հոգևոր կենսունակության զորացմանը:

О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ, КАСАЮЩИИХСЯ ВОЗНИКНОВЕНИЯ И ФУНКЦИЙ РОДА БАГРАТУНИя

ВРЕЖ ВАРДАНЯН

Р е з ю м е я
я

Род Багратуни возник в Армянском нагорье, где и функционировал с древнейших времен. Видные представители рода проявили центростремительные тенденции и придерживались курса политики армянских царей–Арташисянов и Аршакуни. Они имели четко оформленные военные и религиозние функции. В родовых владениях Багратуни обожествляли Торка из Ангел (Англ). Культ этого божества являлся продолжением религиозных верований древнеармянского государственного образования–Хайаса-Аззи. Сообщение Мовсеса Хоренаци об иудейском происхождении Багратуни не подтверждаются фактическими материалами. При этом гипотеза об адиабенском происхождении Багратуни также не может быть обоснована из-за состояния письменных источников. Наследственный титул Багратуни “аспет” связан с военной функцией рода. Издревле носители этого титула царями Армении назначались правителями северо-западной части Армении и защищали ее от набегов враждебных сил. Религиозная функция Багратуни обусловила со стороны видных представителей рода право на коронацию царей армянских Аршакуни.я

---

[77] *Տե՛ս նույն տեղում, էջ 307:*

[78] *Տե՛ս* Ա ս. Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն. *Բագրատունյաց նախարարական տոհմի ծագումը.– «Հայկական ՍՍՌ Պետական պատմական թանգարան, Աշխատություններ», 1948, -1, էջ 192:*

[79] Ռ. Մ ա թ և ո ս յ ա ն. *Բագրատունիներ. պատմա-տոհմաբանակ հանրագիտարան Երևան, 1997, էջ 10:*

[80] Н. А д о н ц. Армения в эпоху Юстиниана, с. 415. *Ա ս. Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն. նշվ. հոդ., էջ 195: Բագարատ անունը հնչունաբանորեն ծագած է համարվում Վանի թագավորության Ռուսա I արքայի օրոք (մ. թ. ա. 730–714) Մանա երկրի թագավոր Բագադատի անունից (տե՛ս Գ. Ղ ա փ ա ն ց յ ա ն. Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 219):*